

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9
2015թ. փետրվարի 25-ին տեղի ունեցած
Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի
խորհրդի N9 նիստի

Նախագահ՝ Ա.Գրիգորյան

Քարտուղար՝ Հ.Եղիկյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 17 անդամներից 17-ը:

Օրակարգ:

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների հաստատումն ըստ դասախոսների:

2. Ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի և հարցատոմսերի հաստատում:

3. Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումն ըստ առաջադիմությունների / առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/:

4. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվություն:

5. Ընթացիկ հարցեր:/Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպման և գնահատման մասին/:

1. **Լսեցին՝** Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների հաստատումն ըստ դասախոսների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը, դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյան, աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը

Որոշեցին՝ Հաստատել առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաները ըստ դասախոսների:

2. **Լսեցին՝** Ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի և հարցատոմսերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ 1. դեկան Ա.Գրիգորյանը՝ նշելով հարցի վերանայման խնդիրը: Հարցաշարն իր մեջ պիտի պարունակի ուսանողի գիտելիքից բացի կարողություններ և հմտություններ ստուգող հարցեր:

3 ամբիոնի վարիչներն էլ նշեցին, որ հարցաշարերը վերանայվել են և կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Որոշեցին՝ Հաստատել ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերը և հարցատոմսերը:

3. Լսեցին՝ Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումն ըստ առաջադիմությունների / առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ դեկան Ա.Գրիգորյանը՝ Առկա համակարգում սովորող 189 ուսանողներից /լուծարքից հետո/ ուսումը կարող են շարունակել 186ուսանող: **1ուսանող՝Արիգա Վաչագանի Իկիլիկյանը /դիմումի համաձայն ազատվում է բուհից/**
Հեռացվում են 2 ուսանողներ՝

1.Եգանյան Լուսինե Էդվարդի **Կենսաբանություն 2-րդ կուրս**

2.Գրիգորյան Ռաֆիկ Գրիշայի **Աշխարհագրություն 3-րդ կուրս**

4. Լսեցին՝ Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատու՝
Կ.Բարսեղյանը:

Որոշեցին՝ Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվությունը գնահատել **բավարար:** /այն կկցվի արձանագրությանը/

5.Լսեցին՝ Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպման և գնահատման մասին /հաղ. Ա.Գրիգորյան /

Ծանոթացվեց «Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպման և գնահատման կարգը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը, դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյանը, աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը, դոցենտ՝ Կ.Պետրոսյանը:

Որոշեցին՝ Ներկայացնել ՈԻՄՎ-ին, որ ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպման և գնահատման կարգի վերաբերյալ չկան առաջարկություններ:

Նախագահ՝ **Ա.Գրիգորյան**

Քարտուղար՝ **Հ.Եղիկյան**

25.02.2015թ.